

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՍ ՇԻՆ 80»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՌՆԻՉՈՐԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱԳԼԱՔԱՐԱՅԻՆ
ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՈՒՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ

տնօրեն՝

Ս. ՂՈՒԼՈՒՆՑ

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	8
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	11
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	15
Գտնվելու վայրը	15
Ռեյիեֆ, երկրաձևաբանություն	18
Շրջանի կլիման	22
Մթնոլորտային օդ	26
Ջրային ռեսուրսներ	26
Հողեր	27
Բուսական և կենդանական աշխարհ	28
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	31
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	35
Ենթակառուցվածքներ	35
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	40
Պատմության, մշակութային հուշարձաններ	42
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	44
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
Օգտագործված գրականության ցանկ	55

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության,

Էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով
Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ` ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր` օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում` պոչանքներ)` տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Սյունիքի մարզի Կոռնիձորի ավազակոպճազլաքարային խառնուրդի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել մանրակրկիտ երկրաբանահետախուզական աշխատանքներ, նպատակ ունենալով որոշել օգտակար հանածոյի հզորությունը, որակական հատկությունները և պարզաբանելու դրանց պիտանելիությունը որպես հումք «Ավազ շինարարական աշխատանքների համար» ՀՍ ԳՈՍ 8736-95 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ՀՍ ԳՈՍ 8267-95 տեխնիկական պահանջներին բավարարող վերջնաարտադրանքի ստացման համար:

Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են դևոնի, յուրայի, կավիճի, էոցենի, միոցենի, պլիոցենի և չորրորդականի հասակի ապարները: Շերտագրական կտրվածքը ներկայացված է հետևյալ կերպ.

✓ միջին դևոն. ներկայացված է մետամորֆիկ թերթաքարերով և մետամորֆացված հրաբխա-նստվածքային շերտախմբով, կազմված պորֆիրիտներով տուֆոբրեկչիաներով;

✓ վերին յուրա. ներկայացված է հրաբխային, հրաբխա-նստվածքային և նստվածքային ֆացիաներով: Լայնորեն տարածված է շրջանի հարավ-արևելյան հատվածում;

✓ ստորին կավիճ. նստվածքները տարածված են շրջանի կենտրոնական և հարավային հատվածներում: Ներկայացված են հրաբխա-նստվածքային և նստվածքային ֆացիաներով;

✓ վերին կավիճ. ունեն փոքր տարածում և արտահայտվում են միայն Տաթև գյուղի տարածքում: Ներկայացված է կրաքարերի, մերգելներով, ավազաքարերով, տուֆավազաքարերով, տուֆոկոնգլոմերատներով և տուֆոբրեկչիաներով: Հաստվածքի հզորությունը հասնում է 350մ-ի;

✓ պալեոգեն. ներկայացված է տուֆֆիտներով, տուֆաթերթաքարերով;

✓ նեոգեն. ներկայացված են տուֆերով, տուֆաբրեկչիաներով և անդեզիտներով: Հզորությունը հասնում է 100մ-ի;

✓ վերին պլիոցեն. ներկայացված է հորիզոնականին մոտ տեղադրված տուֆոբրեկչիակերով, տուֆերով, պեմզայով, անդեզիտային լավաներով և ավազա-

կվային կազմի նստվածքային ապարներով, որոնց միասնական հզորությունը հասնում է 500մ-ի;

✓ Չորրորդական. ունեն մեծ տարածում շրջանի հյուսիս-արևմտյան և կենտրոնական հատվածներում: Ալյուվիալ, դելյուվիալ նստվածքները ունեն փոքր տարածում և հանդիպում են հիմնականում խոշոր գետերի հովիտներին: Ներկայացված են գլաքարերով և ավազաքարերով, թույլ ցեմենտացված են ավազակավերով, կավերով, ավազով: Միջին հզորությունը կազմում է 25մ: Դելյուվիալ նստվածքները ներկայացված են ավազա-կավային առաջացումներով, որոնք իրենց մեջ ներառում են տարբեր կազմի ապարների կտորներ: Սրանք տարածված են քիչ սահմաններում, տեղադրված են հիմնականում բարձունքների լանջերին և ջրաբաժաններում: Առավելագույն հզորությունը կազմում է շուրջ 150մ:

Ուսումնասիրվող տեղամասի ավազակոպճազլաքարային խառնուրդի երևակումը կապված է վերին պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանի նստվածքների հետ (նկար 1):

Երևակումն իրենից ներկայացնում է հորիզոնական տեղադրմամբ ավազակոպճազլաքարային խառնուրդի կուտակ, որտեղ օգտակար հանածոյի շերտաձև մարմինն ըստ երկրաբանական տվյալների ունի մոտ 80մ հզորություն:

Համաձայն տեղագնման արդյունքների՝ լեռնային զանգվածում մեծ ծավալ է կազմում կավային նյութը, ինչը կարող է իջեցնել օգտակար հանածոյի որակական հատկանիշները:

Օգտակար հանածոն երևակման սահմաններում տեղ-տեղ մերկացած է: Հողաբուսական շերտը թույլ է զարգացած, հզորությունը չի գերազանցում 5-6սմ, ծածկում է ուսումնասիրության տեղամասի աննշան մասը:

Ըստ տեղագնման արդյունքների ուսումնասիրության տարածքի մի մասում նախորդ տարիներին կատարվել է հանույթ:


Երևակման սահմաններում մակաբացման ապարները հիմնականում բացակայում են:

ԿՈՌԻԽՉՈՐԻ ԱՎԱԶԱԿՈՂԱԳԼԱՔԱՐԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

Մ 1:1000



Կորդինատային համակարգը ARM WGS-84
Բարձրության համակարգը Բալթիական 1977թ.



Նկար 1.

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

«ԱՍ ՇԻՆ 80» ՍՊ ընկերությունը Կառունտի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնութագիրը ներկայացվում է ստորև:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է «Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգի» պահանջներին համապատասխան:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության երևակումը համապատասխանում է 1-ին խմբին:

Նկատի ունենալով երևակման երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը ու չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 6 հատ մինչև 25մ խորության հորատանցքերի հորատման (150գծ.մ ընդհանուր ծավալով) միջոցով, 9 հատ մինչև 3մ խորության հետախուզահորերի (27.0գ.մ կամ 486.0մ³ ընդհանուր ծավալով) միջոցով, որոնցով կեզրագծվեն և ըստ խորության ու տարածության կուսումնասիրվեն երևակման ավազակոպճագլաքարային կուտակը: Հետախուզահորերի անցումը նախատեսվում է օգտակար հանածոյի մարմնի ներքին կառուցվածքի ուսումնասիրման և նմուշարկման համար: Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով, 3-րդ կարգի ամրության ապարներում:

Փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են վերականգնման ողջ ծավալով՝ 486.0մ³:

Հետախուզահորերը նախատեսվում է անցնել էքսկավատորով: Հետախուզահորի կտրվածքը ստորին մասում կազմում է մոտ 1.0 x 0.8մ:

Օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է հորատանցքերից վերցնել նմուշներ: Նմուշները որպես կանոն պետք է վերցվեն մինչև 25մ երկարությամբ, օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց՝ ուղղաձիգ ուղղությամբ: Յուրաքանչյուր նմուշի երկարությունը կհամապատասխանի օգտակար հաստվածքի հզորությունը տվյալ փորվածքում:

Նախատեսվում է յուրաքանչյուր հետախուզահորերից վերցնել երկուական նմուշ:

Նմուշների ընդհանուր քանակը կկազմի 30, որոնցից յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումներից նախատեսվում է հասցնել մոտ 20կգ-ի:

Նմուշարկումը կատարվում է ակոսային եղանակով: Նմուշները, կախված օգտակար հանածոյի բացված հզորությունից նախատեսվում է վերցնել 2-2.5մ երկարությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.2 x 0.1մ չափսով: Նմուշներն պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտի տարածմանն ուղղահայաց:

Բնամասում ավազի ծավալազանգվածային ցուցանիշները դաշտային պայմաններում կորոշվի 9 հետախուզահորերի անցման ժամանակ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները և բնական մերկացումները: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով:

Քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմը կորոշվի համապատասխանաբար 6-ական նմուշներում:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, երևակումը համաձայն «Ավազի և կոպճի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» համապատասխանում է 1-2-րդ խմբին:

Նախագծված աշխատանքների իրացումը թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական գնահատականը և հաշվարկել հանքավայրի պաշարներն ըստ B կարգի:

Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի պատրաստման համար անհրաժեշտ ամփոփել նախկինում կատարված աշխատանքների արդյունքները: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ.

Երկրաբան – 1 հաստիք՝ 0.5ամիս

Համակարգչային ձևավորող – 1 հաստիք՝ 0.5 ամիս

Ընդամենը՝ - 2 հաստիք՝ 1ամիս:

Ուսումնասիրվող տարածքում անհրաժեշտ է կատարել 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 5.0հա տարածքի վրա, բոլոր փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Հորատման աշխատանքների կազմակերպմանն անհրաժեշտ հորատանցքերի տեղադրման, սարքավորումների և հումքի փոխադրման, ինչպես նաև լեռնային աշխատանքների կազմակերպման համար նախատեսվում է գոյություն ունեցող

մատույցային ճանապարհների վերանորոգում՝ ուղղում և հարթեցում:
Աշխատանքների ծավալը կկազմի շուրջ 0.3կմ:

Ծրագրի համաձայն հորատման աշխատանքների ծավալների կատարման համար նախատեսվում է 6 հորատման հարթիկների կառուցում և նախապատրաստում: Հորատման հարթակների չափերը նախատեսվում է.

$$4\text{մ} \times 2.5\text{մ} = 10\text{մ}^2, \text{ընդամենը՝ } 6 \times 10\text{մ}^2 = 60\text{մ}^2:$$

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կատարել համապատասխան դիտարկումներ, որոնց արդյունքում կպարզաբանվեն օգտագործվող հատվածի գետաջրերի մակարդակի սեզոնային փոփոխությունները, գետի վարարումների քանակը ու տևողությունը:

Օգտակար հանածոների ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար, դաշտային աշխատանքների ընթացքում, նախատեսվում է կատարել ռադիոմետրական չափումներ հանքերևակման ամբողջ տարածքով:

Դաշտային աշխատանքների և լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո դրական արդյունքների առկայության դեպքում նախատեսվում են աշխատանոցային աշխատանքներ պաշարների հաշվարկով երկրաբանական հաշվետվության և հանքավայրի արդյունահանման նպատակահարմարության ՏՏՀ-ի կազմման համար համապատասխան գծագրական հավելվածներով:

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,

- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսական գնահատականը,

- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,

-կկազմվի երկրաբանական հաշվետվություն հանքավայրի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Բացի այդ, աշխատանոցային աշխատանքները կատարվելու են դաշտային սեզոնի սկզբից-մեկ ամիս և դաշտային աշխատանքներին զուգահեռ՝ ստացվող նյութերի ընթացիք մշակմամբ:

- ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն

հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի թիվ 1079-Ն որոշում, որով սահմանվել է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝

դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-N որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը :
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը,
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Կոռնիձորի ավազակոպճազլաքարային խառնուրդի երևակումը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Կոռնիձոր բնակավայրից 3կմ հյուսիս-հյուսիս-արևելք՝ Տեղ գետակի ափին, ՀՀ պետական սահմանի մոտ (նկար 2-5):

Տարածքի աբազակուտակները տեղական բնակչության համար ավազային նյութերի արդյունահանման օբյեկտներ են: Նշված կուտակների օգտագործման փորձը ցույց է տվել, որ դրանք կարող են հուսալիորեն ապահովել տարածաշրջանի շինարարության պահանջները ավազակոպճային նյութերով:

Տեղամասը սահմանափակվում է հետևյալ եզրագծային կորրոդինատներով՝

- | | |
|------------------------------|-------------------------------|
| 1. Y =8633434.8 X =4382950.8 | 8. Y =8633743.2 X =4382907.9 |
| 2. Y =8633500.5 X =4383057.1 | 9. Y =8633748.3 X =4382894.5 |
| 3. Y =8633576.0 X =4383023.1 | 10. Y =8633769.8 X =4382888.9 |
| 4. Y =8633660.3 X =4383016.5 | 11. Y =8633786.6 X =4382866.4 |
| 5. Y =8633768.4 X =4383036.8 | 12. Y =8633734.6 X =4382832.4 |
| 6. Y =8633827.2 X =4382970.1 | 13. Y =8633701.5 X =4382833.6 |
| 7. Y =8633773.8 X =4382942.4 | |

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կորրոդինատներն են ըստ Գրինվիչի՝


- հյուսիսային լայնության $-39^{\circ} 34' 10''$

- արևելյան երկայնության $-46^{\circ} 33' 10''$:


Հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 5հա:

Վարչատարածքային բաժանման տեսակետից Կոռնիձոր բնակավայրը 2016 թվականին ներառվել է Տեղ խոշորոցված համայնքի կազմում: Խոշորացված համայնքը ընդգրկում է Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր և Քարաշեն գյուղական բնակավայրերը:


Տեղ բնակավայրով է անցնում Ստեփանակերտ-Շուշի-Բերձոր-Գորիս միջպետական ավտոճանապարհը (ՀՀ-ի տարածքում՝ Մ12 միջպետական ճանապարհը):



Նկար 2.



Նկար 3.



Նկար 4.

Հեռավորությունը հայցվող տարածքի և Կոռնիձոր բնակավայրի միջև կազմում է մոտ 2.8կմ, մինչև Հագարի գետի Տեղ վտակը՝ մոտ 80մ (լանջով ի վար): Տեղամասի հյուսիսային եզրագծի հեռավորությունը Կոռնիձոր բնակավայրի վարչական սահմանից, որն ըստ էության ՀՀ պետական սահմանն է, տատանվում է 14-ից 75մ սահմաններում: Հագարի գետի հունից երևակման արևելյան սահմանը գտնվում է մոտ 845մ հեռավորության վրա, մոտ 1.2կմ հարավ-արևելք գտնվում է մոտ 33.5հա մալերեսով անտառապատ տարածք:

▪ ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սելսմիկ բնութագիրը***

Երկրաձևաբանական շրջանացման տեսակետից Կոռնիձորի ավազակոպձագլաքարային խառնուրդի երևակումը գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Գորիսի սարահարթի սահմաններում, Զանգեզուրի ու Արցախի լեռնաշղթաների միջև: Իրենից ներկայացնում է բլրաթմբային սարահարթ է, որի միջին բարձրությունը՝ 2800-3200 մ, առավելագույնը՝ 3594 մ (Թրասար):

Սյունիքի բարձրավանդակը տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ (հյուսիսում): Մակերևույթին բնորոշ են բազմաթիվ հրաբխային կոները, կենտրոնական մասում են Ծղուկ (3581 մ) և Մեծ Իշխանասար (3550 մ) հրաբխային զանգվածները: Շատ են քարացրոնները, կան հնագույն սառցապատման հետքեր, փոքր ու փակ գոգավորություններ: Վերջիններից շատերը վերածվել են լճերի՝ Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև և այլն:


Սյունիքի բարձրավանդակում հյուսիսից-արևելքում կարճ, բարձրադիր ու ծալքաբեկորավոր լեռնաճյուղերով միանում է Արցախի լեռնաշղթային: Հարավ-արևմուտքում ու հարավում լանջերը զառիթափ իջնում են դեպի Սիսիանի, Եռաբլրի, Գորիսի, Հագարիի լավային սարավանդները: Բարձրավանդակից սկիզբ են առնում Որոտան, Արփա, Հագարի, Թարթառ գետերը:

Բյուրեղային հիմքը երկրաբանական կառուցվածքի տեսանկյունից, աչքի է ընկնում բարդ մոզայիկ կառուցվածքով, առանձնանում են տարբեր կարգի տեկտոնական բլոկներ, որոնք միմյանցից բաժանված են միջբլոկային և ներբլոկային բեկվածքներով: Տեկտոնական բլոկների հիմնական մասը խորասուզված է ծովի մակարդակից ցածր մինչև մի քանի կիլոմետր: Դրանց զուգահեռ ավելի սահմանափակ ձևով հանդես են գալիս նաև ծովի մակերևույթից վեր բարձրացած բլոկներ:


Բուն Գորիսի միաթեք սարահարթի մակերևույթի բարձրությունները տատանվում են ծ.մ. 1200-2000մ սահմաններում: Սարահարթը երիզվում է Որոտան, Գորիս և Հագարի գետերի հովիտներով և կտրտված է ձորակների և կիրճերի երոզիոն ցանցով: Ջրբաժանային հատվածներին բնորոշ է թույլ բլրային դենուդացիոն մակերևույթ 5-7° թույլ անկմամբ դեպի Արաքս գետի հովիտը:

Կոռնիձոր, Տեղ, Խնձորեսկ գյուղերի հարակից հատվածներում պահպանվել են հողմահարման հին մակերևույթների մնացուկները, որոնք իրենցից ներկայացնում են լավային հոսքերով պատված հարթ մակերևույթով բարձրություններ:

Շրջանի լեռների երկրաձևաբանական, մակերևույթի թեքության անկյունների սողանքների տարածման սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 5-6-ում:



Նկար 5.




Նկար 6.


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Կոռնիձորի ԱԿԽ-ի երևակումը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.3g (նկար 7):

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) Կոռնիձորի երևակման տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել:

Ամենամոտ սողանքային մարմինը գտնվում է երևակման տարածքից մոտ 6կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք՝ Տեղ բնակավայրի սահմաններում (նկար 8):



Նկար 7.



Նկար 8.

Սողանքային մարմնի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության-39° 33' 33" և արևելյան երկայնության 46° 28' 44": Մակերեսը կազմում է 22հա, վտանգավորության մակարդակը՝ III, ռիսկայնության մակարդակը՝ միջին:

- **Շրջանի կլիման**

Կոռնիձորի երևակյան շրջանի կլիման չոր է, ցամաքային (նկար 9): Շրջանի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ մոտակա Գորիս օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների արդյունքների:


Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-0.5	0.0	2.9	8.5	12.6	16.2	18.9	18.6	14.7	9.9	5.5	1.7	9.1	-20	35

Օդի հարաբերական խոնավությունը

Ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
64	66	71	71	74	72	69	70	77	77	70	64	70	63	54



Նկար 9.

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները											
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ				
860.2	հունվար	3	2	2	6	9	13	20	45	30	2.0	1.5	25
		2.7	2.4	2.2	1.6	1.6	2.1	2.6	3.2				
	ապրիլ	2	2	4	13	12	14	18	35	33	1.5		
		2.3	2.2	1.8	1.6	1.7	2.0	2.3	2.5				
	հուլիս	1	1	4	17	15	14	17	31	26	1.2		
		1.4	1.4	1.6	1.7	1.6	1.6	1.6	1.6				
	հոկտեմբեր	2	1	2	12	14	14	17	38	35	1.3		
		1.9	1.9	1.8	1.7	1.6	1.9	1.9	2.2				

Աղյուսակ 4.

Մթնոլորտային տեղումները
Ըստ ամիսների
միջին ամսական/առավելագույն օրական

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան գումարային
34	44	71	91	113	91	48	39	62	64	53	34	744
29	72	45	47	72	82	70	63	54	57	58	35	82

Աղյուսակ 5.

Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով Օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
47	65	122

Աղյուսակ 6.

Արևափայլի տևողություն
Ըստ ամիսների

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան գումարային
132	131	141	155	191	213	226	215	184	146	126	117	1977

Աղյուսակ 7.

Անարև օրերի քանակը
Ըստ ամիսների

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան գումարային
5	6	8	6	4	3	3	4	5	7	6	6	63

▪ ***Մթնոլորտային օդ***

Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրություն Կոռնիձորի երևակման տարածքում շրջակա միջավայրի պետական մշտադիտարկումների համակարգի կողմից չի կատարվում:

Երևակման ենթաշրջանը բացառապես գյուղատնտեսական է: Տարածքում չկան մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր հանդիսացող գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, երևակումից մոտ 3կմ հեռավորության վրա անցնող S-8-55 տեղական նշանակության ավտոճանապարհը ծանրաբեռնված չէ:

Տեղամասին ամենամոտ գտնվող՝ Կոռնիձոր բնակավայրի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Հիմք ընդունելով նշված ձեռնարկը, երևակման տարածքի մթնոլորտային օդում փոշու ֆոնային կոնցենտրացիան ընդունվում է որպես 0,2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ 0,02 մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ 0,008 մգ/մ³ և ածխածնի օքսիդինը՝ 0,4 մգ/մ³ : Այս տվյալների հիման վրա կկատարվի երևակման տարածքում բնապահպանական միջոցառումների նախագծումը:

▪ ***Ջրային ռեսուրսներ***

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հագարի գետն է, Որոտանի ձախ և ամենամեծ վտակը: Ունի 113 կմ երկարություն և 2570 կմ² ավազան: Սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակից՝ Դալիդաղ կոչվող լեռնազանգվածի հարավային լանջից: Հոսում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, խոշոր վտակը Հոչազն (Հոչանց) է (63 կմ): Մնումը խառն է, հորդացումը տեղի է ունենում մայիս-հունիսին ամիսներին: Տարեկան միջին ծախսը կազմում է 16.2 մ³/վ է, հոսքը՝ 510 միլիոն մ³:

Հայցվող տարածքից հարավ, մոտ 80մ լանջով ի վար, հոսում է Հագարի գետի Տեղ վտակը:

Ուսումնասիրվող տեղամասի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակումը կապված է վերին պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանի նստվածքների հետ և կապված չէ գետերի ժամանակակից երոզիոն-կուտակիչ գործունեության հետ:

▪ **Հողեր**

Կոռնիձորի երևակման շրանում հողային ծածկույթը ներկայացված է դարչնագույն անտառային հողերի ենթատեսակներով, իսկ Կոռնիձորից արևմուտք դեպի Տեղ գյուղ ընկած հատվածում զարգացած են սովորական ալրակարբոնատային սևահողերը (նկար 10):


Երևակման տարածքում հողաբուսական շերտը շատ թույլ է զարգացած: Դարչնագույն կարբոնատային տափաստանացված հողերը դիտարկվել են երևակման տարածքում 5-6սմ հզորությամբ: Հետազոտության արդյունքներով, հումուսի պարունակությունը հողերում չի գերազանցել 11.3%, 100գ հողում կլանված կատիոնների գումարը՝ 31.7մ/էկվ, ջրային քաշվածքի pH-ը՝ 6.6: Հողերին բնորոշ է կավավազային մեխանիկական կազմ, հորիզոնները տարանջատված չեն: Հողերի քիմիական կազմը հետևյալն է.

Աղյուսակ 8.

Շիկացման կորուստ	SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	P ₂ O ₅	MnO	CaO	MgO	K ₂ O	SO ₃
16.83	52.76	13.2	9.06	0.11	0.14	3.3	2.01	2.3	0.43

Նմուշներում արձանագրվել է պղինձ 1.02մգ/կգ, ցինկ 14.9մգ/կգ և մանգան (0,1N H₂SO₄-ով կորզված) 237.4մգ/կգ, կոբալտ չ/ն, նիկել չ/ն, սնդիկ չ/ն:

Քանի որ երևակման տարածքը գտնվում է թեք լանջի վրա, տարածված են հողի երոզիոն երևույթները: Հիմնականում փոքր հզորությամբ հողային զանգվածը միախառնված է ավազակոպճագլաքարային զանգվածին, բացակայքում է աստիճանական անցումը հողագոյացնող ապարի և բուն հողերի միջև:




Նկար 10.

▪ ***Բուսական և կենդանական աշխարհ***

Կոռնիձորի երևակման շրջանի բուսականության գերիշխող տեսար տափաստանային հացահատիկային, տարախոտա-հացահատիկային բուսականությունն է (նկար 11): Հիմնական բույսը մազիկավոր սիզախոտն է, օշինդրը, փետրախոտը, ոգնախոտը և գազը:

Տեղ գետակի հունային հատվածին մոտ տարածքներում աճում են մասրենու, ալոճենու և մոշենու նոսրուտներ, ուռենի:



Նկար 11.

Ժամանակին այդ տարածքում տնկվել են և պտղատու ծառեր՝ սալորենի, խնձորենու, կեռասենի, սակայն ներկայումս դրանք չեն մշակվում:

Երևակման տարածքից մոտ 1.5կմ արևելք-հարավ-արևելք մոտ 33.5հա տարածք զբաղեցնում են Գորիսի անտառապետության պաշտպանական անտառները, որտեղ աճում են հիմնականում բոխի, սկացիա, ուռենի, ընկուզենի, տանձենի և թեղի:

ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից երևակման տարածաշրջանում հայտնի են.

- գազ Բիլովայի – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, Հայաստանի էնդեմիկ, աճելավայրը գտնվում է Տեղ գյուղի շրջակայքում,

- գագ Կիրալիչնիկովի – վտանգված տեսակ, Անդրկովկասի էնդեմիկ, աճելավայրը գտնվում է Տեղ գյուղի շրջակայքում:

Հայցվող տարածքի և Տեղ գյուղի միջև հեռավորությունը կազմում է մոտ 5կմ:

Երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում նշված բուսատեսակների աճելավայրերի առկայությունը ստուգելու նպատակով կատարվել են երթուղային դիտարկումներ: Արդյունքում փաստվել է, որ գագ Բիլովայի և գագ Կիրալիչնիկովի տեսակները երևակման տարածքում չեն աճում:

Երևակման և դրան հարակից տարածքներում կատարվել է կենդանական աշխարհի վիզուալ դիտարկում: Նշվել են դաշտամուկ, աղվես, շնագայլ: Առկա են դաշտամկան բազմաթիվ բներ, բայց խոշոր կաթնասունների ապրելավայրեր չեն դիտարկվել: Բազմազան է միջատների ֆաունան՝ նկատվել է մորեխ, ճոխկներ, ցիկադներ, գնայուկ բզեզներ, գոմաղբաբզեզներ և ոսկե բզեզներ: Թռչուններից դիտարկվել է մոխրագույն կաքավ և դաշտային արտույտ: Հատկապես շատ են թռչունները Տեղ գետակի երևակմանը հանդիպակաց լանջին, ծառածածկ հատվածներում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում պահպանության ներքո գտնվող կենդանական տեսակների առկայությունը պարզելու նպատակով կատարվել է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Համաձայն է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների, Կոռնիձոր գյուղին հարակից տարածքներում, անտառապատ լանջերին և լեռնային գետակների կիրճերում բնակվում է Բեխշտեյնի գիշերաչղջիկը: Խոցելի կենդանական տեսակ է, որի համար վտանգման հիմնական գործոն են հանդիսանում անտառհատումները և թունաքիմիկատներով անտառների մշակումը: Ապրում են անհատորեն կամ փոքր խմբերով՝ առավելապես ծառերի փչակներում, կամ կեղևի տակ, երբեմն՝ բնակելի շինությունների, ցախատների և գերանածածկ անասնագոմերի տանիքների տակ: Ակտիվ են օրվա մթնշաղին: Կերը բռնում են՝ թռչելով ծառերի կամ ջրավազանների վրայով: Հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ է: Թվաքանակը և պոպուլյացիաների սահմաններն ուսումնասիրված չեն:

Տեսակի տարածվածությունը՝ Անգլիա, Մերձբալթյան երկրներ, Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա, Շվեյցարիա, Հունգարիա, Լեհաստան, Հարավային Կովկաս և Անդրկովկաս՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղը:

Հայաստանում առաջին անգամ տեսակը նկարագրվել է 2003թ.-ին Սյունիքի մարզի հյուսիս-արևելքում (Գորիսի շրջան, գգ. Խնձորեսկ, Տեղ և Կոռնիձոր), իսկ 2004 թ.-ին՝ Լեռնային Ղարաբաղին սահմանակից գյուղերում:

Տեսակի պահպանության միջոցառումներ պետության կողմից չեն իրականացվում:

Կոռնիձորի ԱԿԽ երևակման տարածքը անտառագուրկ է, ծածկված է սակավ տափաստանային բուսականությամբ, չի հանդիսանում Բեխշտեյնի գիշերաչղջիկի համար բնորոշ ապրելավայր:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Կոռնիձորի երևակման տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Գորիսի պետական արգելավայրը գտնվում է ավելի քան 25կմ հեռավորության վրա: Արգելավայրը ստեղծվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1972 թ. նոյեմբերի 6-ի N 775 կարգադրությամբ անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանությունն նպատակով:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ: ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 9.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Մատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Միսիան քաղաքի հս-արլ եզրին
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ավիին

1	2
«Մալևի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալև գյուղի մոտ
«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» էրոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա

1	2
«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
«Պառավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիրլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆազնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-ախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա

«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Զրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, Ճամփեզրին, խաչքարի մոտ
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շոան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Երևակման տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձաններն են «Խորձոր» V-աձև կիրճ, «Անանուն» երոզիոն ռելիեֆը և «Անանուն» բուրգանման մնացուկներ, որոնք գտնվում են Երևակման տարածքից համապատասխանաբար մոտ 14կմ, մոտ 13.5 և մոտ 18կմ:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

▪ *Ենթակառուցվածքներ*

Օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տեղամասը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում:

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ 17 գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերա-կշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են: 2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները

Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 16.6%,
- գյուղատնտեսություն՝ 6.9%,
- շինարարություն՝ 4.3%,
- մանրածախ առևտուր՝ 1.5%,
- ծառայություններ՝ 1.3%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագի-տացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացա-հատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրակա-նացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 42.3 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ

իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Քաջարան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 6.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ:

ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում 18 առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 14.8 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 4.5 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների

արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամուլիբդենային արտադրության հետ: Ազարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսակետերը:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 137.3 հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 93.2հազ.մարդ, գյուղականը՝ 44.1հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքը 2020թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 347469.6մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 112.1%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 283408.2մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 33706.9մլն.դրամ,
- էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 29195.0մլն.դրամ,
- ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 1159.5մլն.դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև աղյուսակ 10-ում:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 16.1մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 42.8մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքաստարածությունները կազմել են 13332հա, բերքատվությունը՝ 17.3g/հա, համախառն բերքը՝ 23.0հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքաստարածությունները կազմել են 1200հա, բերքատվությունը՝ 144.6/հա, համախառն բերքը՝ 17.4հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքաստարածությունները կազմել են 714հա, բերքատվությունը՝ 100.8g/հա, համախառն բերքը՝ 7.2հազ.տոննա: Պտղի և հատապտղի տնկրկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 2621հա, 46.3g/հա և 11.9հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 179հա, 31.5g/հա և 0.6հազ.տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 52.1հազ.գլուխ, խոզերինը՝ 17.0հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 108.3հազ.գլուխ, ձիեր՝ 2.2հազ.գլուխ:

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
Ամբողջ արդյունաբերությունը	347 469.6	339 016.5	112.1
այդ թվում՝			
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	283 408.2	275 032.6	114.6
այդ թվում՝			
մետաղական հանքաքարերի արդյունահանում	282 284.6	274 471.1	114.4
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 034.1	472.0	2.3 անգ. times
հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	89.5	89.5	109.2
Մշակող արդյունաբերություն	33 706.9	33 629.4	101.9
որից՝			
աննդամթերքի արտադրություն	28 204.5	28 251.8	97.9
խմիչքների արտադրություն	443.9	495.7	107.8
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	152.1	144.1	196.3
հագուստի արտադրություն	58.7	58.7	109.3
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	105.2	105.2	112.4
ոետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	165.6	165.6	3.3 անգ. times
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2 779.5	2 777.4	128.5
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն. բացի մեքենաներից և սարքավորանքից	790.7	790.7	2.0 անգ. times
էլեկտրական սարքավորանքի արտադրություն	619.9	620.0	92.6
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	29 195.0	29 195.0	101.6
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերաշակում	1 159.5	1 159.5	102.3

Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը կազմել են 249481.2 մլն.դրամ, առևտրային կազմակերպությունների դեբիտորական և կրեդիտորական ծախսերը՝ 132956.2 մլն.դրամ, օտարերկրյա ներդրումների գուտ հոսքերը՝ 7089.5 մլն.դրամ:

Մյունիքի մարզի կենսաթոշակատուների քանկը կազմել է 22700 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 42664 դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 51, հաճախող երեխաների քանկը՝ 4533, մանկավարժների քանակը՝ 479, մեկ մանկավարժի մոտ ընկնող երեխաների թվաքանակը՝ 9.6:

2019/2020 ուսումնական տարում Սյունիքի մարզում գործել է 117 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 17100, մանկավարժների թվաքանակը՝ 1693, մեկ մանկավարժիմծն ընկնող աշակերտների թվաքանակը՝ 10.1:

Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2019/2020 ուսումնական տարում կազմել է 17, աշակերտների թվաքանակը՝ 2596:

Սյունիքի մարզում 2019/2020 ուսումնական տարում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 4 հաստատություններ, դրանցում կրթվել են 154 սան, աշխատել են 54 մանկավարժ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 7, ուսանողների թվաքանակը՝ 939, մանկավարժների թվաքանակը՝ 254, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 3.7:

Սյունիքի մարզում գործում է երկու բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ կրթություն են ստանում 1636 ուսանող և աշխատում են 223 հոգի պրոֆեսորադասախոսական անձնակազմ:

Գործում են 2 թատրոն, 4 թանգարան և 83 գրադարան: 12 մարզական կազմակերպություններում մարզվում են 2313 մարզիկ, օլիմպիական մարզաձևերով խմբերի քանակը՝ 146, ոչ օլիմպիական մարզաձևերով՝ 21:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներառված է Տեղ խոշորացված համայնքի Կոռնիձոր բնակավայրի վարչական սահմաններում: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ, դաշտավարությամբ, խաղողագործությամբ, բանջարանոցային և կերային կուլտուրաների մշակությամբ: Համայնքային հողերը կազմում են 2417հա, բնակիչների ընդհանուր թիվը՝ 1109:

Կոռնիձորի միջնակարգ դպրոցը նախատեսված է 370 աշակերտի համար, այժմ սովորում է 159 սան: Նախադպրոցական հաստատություն է հաճախում 49 երեխա, արտադպրոցական դիոլի խմբակ՝ 5 սան, արտադպրոցական պարի խմբակ՝ 20 երեխա: Բնակավայրում գործում է բուժկետ:

Համայնքի հողերը 2417 հա է, այդ թվում.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2277 հա (որից՝ վարելահող՝ 1224 հա, բազմամյա տնկարկ՝ 67 հա, խոտհարք՝ 7 հա, արոտ՝ 114 հա, այլ հողատեսք՝ 865 հա),
- բնակավայրերի հողեր՝ 63 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 14 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 20 հա,
- անտառային հողեր՝ 34 հա, որից անտառածածկ՝ 34 հա ,
- ջրային հողեր՝ 8 հա:

Կոռնիձորի ԱԿԽ երևակման հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ վարելահողերով և գյուղատնտեսական այլ հողերով:

Ավագակոպձային խառնուրդի երևակման տարածքի երկրաբանական ուսումնասիրության և հետագա հնարավոր շահագործման հարցը օրահասական է Կոռնիձոր բնակավայրի համար: 2020 թվականի հայ-ադրբեջանական պատերազմից հետո բնակավայրի զգալի տարածքություններ անցել են թշնամու վերահսկողության ներքո, ինչի պատճառով կրճատվել են տեղի բնակիչների կողմից գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունները, զգալի խնդիրներ են առաջացել անասնապահության անվտանգ իրականացման տեսակետից: Քաշաթաղի շրջանի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրը շուրջ 18 կմ սահման ունի Ադրբեջանի հետ: Գյուղը երեք կողմից հայտնվել է ադրբեջանական սահմանագծում:

Այդ պարագայում բնակավայրում առաջացել է այլընտրանքային աշխատատեղերի ստեղծման խնդիր: Հանքի հնարավոր գործարկումը թույլ կտա հիմնել բնակավայրի զարգացման նոր ուղղություն ոչ մետաղական արդյունաբերության բնագավառում, բացել նոր աշխատատեղեր: Գործող հիմնարկությունը, բացի ուղղակի ներդրումներից, կիրականացնի սոցիալական

աջակցության ծրագրեր, կապահովվի ֆինանսական միջոցների ներգավում բնակավայրի ատևտրաշրջանառության ոլորտ;

Միաժամանակ, քանի որ տեղամասը գտնվում է սահմանամերձ հատվածում, ապա կիրականացվի տարածքի հսկողություն, դիտարկում, ինչը կնպաստի բնակավայրի անվտանգային իրավիճակի բարձրացմանը:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:


▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Կոռնիձոր բնակավայրի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձանները.

- 17-20դդ.-ի գերեզմանոց գյուղի հարավ-արևելյան եզրին,
- 17-20դդ.-ի գյուղատեղի Կոռնիձոր և բնակելի քարայրեր, գյուղի հարավային եզրին,
- 17-18դդ.-ի եկեղեցի, Կոռնիձոր գյուղատեղիի կենտրոնում,
- մ.թ.ա 2-1 հազարամյակի դամբարան, գյուղից մոտ 2,5կմ արևմուտք, «Շուռնուխի խաչեր» ավերված գյուղատեղիում,
- 10-րդ դարի խաչքար դամբարանաթմբի վրա,
- մ.թ.ա 2-1 հազարամյակի կուռք դամբարանաթմբի վրա,
- 1968թ, Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին գյուղի կենտրոնում:

Պատմության և մշակույթի հուշարձանների հողերը գտնվում են երևակման տարածքից նվազագույնը 3.2կմ հեռավորության վրա (նկար 12):



Նկար 12.

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Հետախուզական փորվածքների անցումը, հորատումը, հորատման հարթակների շինարարությունը և աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու են գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի աշխատանքների տարածքին հարակից բնակավայրերում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար պետք է կազմեն 5մգ/մ^3 , 0.2մգ/մ^3 , 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3 : Նախնական հաշվարկներին համաձայն, երևակման տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Այդ նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան. Հետախուզման տարածքի ապահովումը տեխնիկական ջրով կատարվում է հորատման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, հետախուզահորերի տարածքի և ճանապարհների ջրման նպատակով: Ջուրը նախատեսվում է գնել մոտակա Կոռնիձոր բնակավայրից և երևակման տարածք տեղափոխել ջրցան-վացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կկատարվի անհատական տափաշշերով:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանների նախնական դիտարկումների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Երևակման տարածքը գտնվում է մեղմաթեք լանջի վրա, որի ստորոտով հոսում է բնական դրենաժ հանդիսացող Տեղ գետակը: Հետախուզական աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողային ծածկույթ.

Հետախուզական փորվածքների անցման և հորատման հրապարակների շինարարության ժամանակ հողային ծածկույթի վրա բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու, քանի որ երևակման տարածքում հողաբուսական շերտը տարածված է ֆրագմենտար և ունի ընդամենը 5-6սմ հզորություն: Տարածքի գերակշռող մասում հետախուզման առարկա հանդիսացող ավազակոպճային խառնուրդը մերկացված է, միախառված հողերի հետ: Հողի բերրի շերտի հեռացումը ապահովել հնարավոր չէ: Այդ պատճառով 60մ² ընդհանուր մակերեսով հորատման հարթակները կկառուցվեն անմիջապես երևակման մակերևույթին, առանց նախնական հողապատրաստման աշխատանքների կիրառման:

Հող չի օտարվելու նաև ճանապարհի կառուցման համար: Կարգաբերվելու է գոյություն ունեցող 0.3կմ երկարությամբ մուտքային ճանապարհը:

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազակոպճային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա ցածր է, քանի որ տեղամասում աճող տափաստանային սակավ բուսականությունը հատկանշական է հանրապետության ամբողջ տարածքի նույն լանդշաֆտային գոտիների համար: Միաժամանակ, երևակման տարածքը երկար տարիներ օգտագործվել է բնակիչների կողմից սեփական կարիքների համար ավազի արդյունահանման նպատակով:

Բույսերի և կենդանիների կարմիր գրգերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Ընդերքօգտագործման թափոնները ներկայացված են լինելու օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղերը, որոնք պատկանում են «Բանեցված շարժիչների յուղերի թափոններ» տեսակին, վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410020102033:

Հորատման թագագլխիկների սպառողական հատկությունները կորցրած մնացորդներ չեն առաջանալու, քանի որ նախախեւված են հորատման շատ փոքր ծավալներ: Միաժամանակ, հորատման հետ կապված բոլոր տեխնոլոգիական հարցերի կառավարումը (այդ թվում՝ հորատման պրոցեսի հետ կապված նյութերի,

մնացորդների, հումքի) կառավարումը կատարվելու է հորատումը իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:

Առաջանալու է նաև չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004 :

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ Կոռնիձորի երևակման սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկա:

Բնության հուշարձանները գտնվում են հայցվող տեղամասից նվազագույնը 13.5կմ հեռավորության վրա և, հետևաբար, բացառվում է որևիցե ազդեցություն բնության հուշարձանների վրա:

Աղմուկ և թրթռումներ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Մոտակա Կոռնիձոր բնակավայրի տարածքում աղմուկի նորմավորման հետ կապված խնդիրները կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-111-11.3 ՀՀ սանիտարական նորմերով:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանալու է առաջին կարգի թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնազնաց մեքենաների, տրանսպորտային միջոցների և հորատման աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Նորմատիվային փաստաթղթերով սահմանված ցուցանիշներն ապահովվելու համար են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Պատմամշակութային հուշարձաններ ավազակոպճային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում չկան,

ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա: Մոտակա պատմամշակութային հուշարանը գտնվում, է երևակման տարածքից մոտ 3.2կմ հեռավորության վրա:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Աղյուսակ 11.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Հորատում, հորատման հարթակների շինարարություն	Մակերևութային փորվածքների անցում	Ճանապարհի բարեկարգում
Մթնոլորտային օդ	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	Ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	Ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	Ցածր կարճատև	Ցածր կարճատև	Ցածր կարճատև
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- a. Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում, համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- b. Երևակման տարածքում բացառվելու է օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում, կուտակում:
- c. Հորատման աշխատանքներ իրականացնող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատու է հորատման արդյունքում հնարավոր գոյացող հորատման թագազլխիկների մնացորդների հավաքման և երևակման տարածքից դուրս բերման համար :
- d. Արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում :
- e. Փոշենստեցման նպատակով ճանապարհի, հորատման հրապարակների և հետախուզահորերի տարածքի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին : Տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է և տեղափոխվելու է մոտակա բնակավայրերից՝ պայմանագրային հիմունքներով : Ըստ գործող նորմատիվների՝ 1մ^2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից:
- f. Կեղտաջրերի հավաքում հորատից զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով : Համապատասխան ծառայություն մատուցող ընկերության հետ պայմանագիր կկնքվի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալուց հետո :
- g. Հետախուզահորերի հետ լցնում, հորերով զբաղեցրած 18մ^2 մակերեսով տարածքի հարթեցում և փխրեցում : Կկատարվի նաև 60մ^2 ընդհանուր մակերեսով

հորատման հարթակների տարածքի փխրեցում հորատման աշխատանքների ավարտից հետո : Աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում է մասնահանել 45.0հազ.դրամ գումար, որից 25.0 հազ.դրամը աշխատավարձ, 20.0հազ.դրամը՝ նյութերի ծախս :

- h. Կենցաղային աղբի համաքում անթափանց տարողություններում: Շաբաթական մեկ անգամ Կոռնիձոր գյուղում շրջում է մեքենա, որն իրականացնում է աղբի հավաքում : Պայմանագիր կկնքվի աղբահանության ծառայություն մատուցող կազմակերպության հետ և շաբաթական կտրվածքով կատարվող շրջայցի ժամանակ մեքենան կտեղափոխի նաև երևակման տարածքում առաջացող կենցաղային աղբը :
- i. Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի և թրթռումների նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- j. Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն :
- k. Աշխատանքների իրականացման համաձայնեցում սահմանապահ գորքերի հետ :
- l. Թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների վայրերից դուրս:
- m. Երթուղիների ժամանակ ձեռնափայտով հարվածների իրականացում բնահողային հատվածին, որպեսզի ստեղծվի սողունների համար անհանգստացնող գործոն և դրանք ժամանակավորապես լքեն տարածքը և բացավի մարդ-կենդանի հանդիպումը:
- n. Բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենդանիների կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով:
- o. Աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում, նախքան դաշտային աշխատանքների սկիզբը ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում :
- p. ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում

որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծում՝ շարժական վագոն-տնակի տեղադրում, որը օգտագործվում է որպես հանդերձարան և հանգստի սենյակ:
- Աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում, ընկերությունը դադարեցնելու է աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնելու է լիազորված մարմնին :

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ երևակումը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- ii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով : Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը : Կենցաղային նշանակության վագոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

Հրդեհային անվտանգությունն ապահովվելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ : Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Երևակման տարածքում տեղադրված վահոն-տնակի մոտ

տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

«ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ-ի կողմից հայցվող տեղամասի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության և փրկարար ծառայության հետ:

Երևակման երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ

անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ^3 , ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ^3 , մրի համար՝ $0,15\text{մլգ/մ}^3$:

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,


3. երևակմանը հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,

4. աղմուկի մակարդակի մոնիթրինգ աշխատանքային գործընթացի ժամանակ,

5. նավթամթերքներով տարածքի աղտոտվածության մշտադիտարկում:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 13-ում:



Նկար 13.

- 1 - Մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- 2 - Նավթամթերքներով տարածքի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- 3 - Աղմուկի մակարդակի վերահսկողություն
- 4 - Տեղ գետակի ջրերի մշտադիտարկում
- 5 - Կենսաբազմազանության մշտադիտարկման տարածք

Գրականություն

1. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ, 2020թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
8. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
9. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
10. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
11. ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք
12. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, Սյունիքը թվերով